ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 11

ՖՀՄՍ 2 Խմբի և հետգնված բաժնետոմսերով գործարքներ

Հղումներ

- ՀՀՍՍ 8 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»*
- ՀՀՍՍ 32 «*Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»*
- ՖՀՍՍ 2 «*Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում»*

Հարցադրումը

1 Սույն Մեկնաբանությունն անդրադառնում է երկու հարցի: Առաջին հարցն այն է, թե արդյոք հետևյալ գործարքները պետք է հաշվառվեն որպես բաժնային գործիքներով մարվող, թե դրամական միջոցով մարվող՝ համաձայն ՖՀՍՍ 2-ի պահանջների.

(ա) կազմակերպությունն իր աշխատակիցներին տալիս է իրավունք իր սեփական կապիտալի գործիքների նկատմամբ (օրինակ՝ բաժնետոմսերի օպցիոններ) և կա՛մ կամավոր որոշում է, կա՛մ պարտավոր է գնել սեփական կապիտալի գործիքներ (օրինակ՝ հետգնված բաժնետոմսեր) մեկ այլ կողմից, որպեսզի բավարարի իր պարտականություններն իր աշխատակիցների նկատմամբ.

(բ) կազմակերպության աշխատակիցներին տրվում են իրավունքներ այդ կազմակերպության սեփական կապիտալի գործիքների նկատմամբ (օրինակ՝ բաժնետոմսերի օպցիոններ)՝ կա՛մ հենց կազմակերպության, կա՛մ իր բաժնետերերի կողմից, և կազմակերպության բաժնետերերը տրամադրում են անհրաժեշտ սեփական կապիտալի գործիքները:

2 Երկրորդ հարցը վերաբերում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնագրերին, որոնք ներառում են միևնույն խմբին պատկանող երկու կամ ավել կազմակերպություններ: Օրինակ՝ դուստր կազմակերպության աշխատակիցներին տրվում են իրավունքներ մայր կազմակերպության սեփական կապիտալի գործիքների նկատմամբ՝ որպես հատուցում դուստր կազմակերպությանը մատուցած ծառայությունների համար: ՖՀՍՍ 2-ի 3-րդ պարագրաֆում սահմանված է.

> «Սույն ՖՀՍՍ-ի նպատակներից ելնելով՝ կազմակերպության բաժնետերերի կողմից իր սեփական կապիտալի գործիքների փոխանցումն այն կողմերին (ներառյալ աշխատակիցներին), որոնք այդ կազմակերպությանը տրամադրել են ապրանքներ կամ ծառայություններ, համարվում են բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ, բացառությամբ երբ հստակ է, որ փոխանցման նպատակը կազմակերպությանը տրամադրված ապրանքների կամ ծառայությունների համար վճարելը չէ: *Սա նաև կիրառվում է այն դեպքերի նկատմամբ, երբ մայր կազմակերպության կամ վերջինիս հետ միևնույն խմբում գտնվող մեկ այլ կազմակերպության սեփական կապիտալի գործիքները փոխանցվում են այդ կազմակերպությանը ապրանքներ կամ ծառայություններ տրամադրող կողմերին»:* [Շեշտադրումն ավելացված է]

Սակայն, ՖՀՍՍ 2-ը ուղեցույց չի տալիս, թե ինչպես նմանատիպ գործարքները հաշվառել՝ խմբի յուրաքանչյուր կազմակերպության անհատական կամ առանձին ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու համար:

3 Հետևաբար, երկրորդ հարցը առնչվում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման հետևյալ համաձայնագրերին.

(ա) մայր կազմակերպությունն անմիջապես իր դուստր կազմակերպության աշխատակիցներին է տալիս իրավունքներ իր իսկ սեփական կապիտալի գործիքների նկատմամբ. դուստր կազմակերպության աշխատակիցներին անհրաժեշտ սեփական կապիտալի գործիքները տրամադրելու պարտականությունը կրում է մայր կազմակերպությունը (այլ ոչ թե դուստր կազմակերպությունը).

(բ) դուստր կազմակերպությունն իր աշխատակիցներին տալիս է իրավունքներ իր մայր կազմակերպության սեփական կապիտալի գործիքների նկատմամբ. իր աշխատակիցներին անհրաժեշտ սեփական կապիտալի գործիքները տրամադրելու պարտականությունը կրում է դուստր կազմակերպությունը:

4 Սույն Մեկնաբանությունը դիտարկում է, թե ինչպես պետք է հաշվառվեն 3-րդ պարագրաֆում ներկայացված բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնագրերը այն դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում, որը ծառայություններ է ստանում աշխատակիցներից:

5 Մայր և դուստր կազմակերպությունների միջև կարող է լինել համաձայնագիր, ըստ որի՝ դուստր կազմակերպությունը պարտավոր է վճարել մայր կազմակերպությանը՝ իր աշխատակիցներին սեփական կապիտալի գործիքներ տրամադրելու համար: Սույն Մեկնաբանությունը չի դիտարկում, թե ինչպես պետք է հաշվառվեն նմանատիպ ներխմբային վճարման համաձայնագրերը:

6 Թեև սույն Մեկնաբանությունը կենտրոնանում է աշխատակիցների հետ գործարքների վրա, այն նաև կիրառվում է աշխատակից չհանդիսացող՝ ապրանքներ կամ ծառայություններ մատակարարողների հետ համանման բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների նկատմամբ:

Փոխհամաձայնություն

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնագրեր, որոնք ներառում են կազմակերպության իր իսկ սեփական կապիտալի գործիքները (պարագրաֆ 1)

7 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքները, որոնցում կազմակերպությունը ծառայություններ է ստանում՝ որպես հատուցում իր իսկ սեփական կապիտալի գործիքների դիմաց, պետք է հաշվառվեն որպես սեփական կապիտալի գործիքներով մարվող: Սա կիրառվում է՝ անկախ այն հանգամանքից, թե կազմակերպությունը կամավոր է որոշում, թե պարտավոր է գնել այդ սեփական կապիտալի գործիքները մեկ այլ կողմից, որպեսզի բավարարի իր պարտականություններն իր աշխատակիցների նկատմամբ՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնագրի ներքո: Այն նաև կիրառվում է՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք՝

(ա) կազմակերպությունն ինքը, թե իր բաժնետեր(եր)ն է աշխատակիցներին իրավունքներ տվել այդ կազմակերպության սեփական կապիտալի գործիքների նկատմամբ. կամ

(բ) կազմակերպությունն ինքը, թե իր բաժնետեր(եր)ն է մարել բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնագիրը:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման համաձայնագրեր, որոնք ներառում են մայր կազմակերպության սեփական կապիտալի գործիքները

Մայր կազմակերպությունն իր դուստր կազմակերպության աշխատակիցներին տալիս է իրավունքներ իր իսկ սեփական կապիտալի գործիքների նկատմամբ (պարագրաֆ 3(ա))

8 Եթե բաժնետոմսերի վրա հիմնված համաձայնագիրը մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործիքներով մարվող, ապա դուստր կազմակերպությունն իր աշխատակիցներից ստացած ծառայությունները պետք է չափի համաձայն այն պահանջների, որոնք կիրառվում են սեփական կապիտալի գործիքներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների նկատմամբ, իսկ սեփական կապիտալում համապատասխան աճը ճանաչվում է որպես ներդրում մայր կազմակերպությունից:

9 Մայր կազմակերպությունը կարող է իր դուստր կազմակերպության աշխատակիցներին իրավունքներ տալ իր իսկ սեփական կապիտալի գործիքների նկատմամբ՝ կախված խմբի հետ շարունակվող աշխատանքի սահմանված ժամկետը լրանալուց: Մեկ դուստր կազմակերպության աշխատակիցը կարող է տեղափոխվել աշխատանքի մեկ այլ դուստր կազմակերպություն սահմանված վաստակման ժամկետում՝ առանց ազդելու այդ աշխատակցի իրավունքների վրա, որ նա ուներ մայր կազմակերպության սեփական կապիտալի գործիքների նկատմամբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման սկզբնական համաձայնագրի ներքո: Յուրաքանչյուր դուստր կազմակերպություն պետք է չափի աշխատակցից ստացած ծառայությունները՝ հիմք ընդունելով այդ սեփական կապիտալի գործիքների այն ամսաթվի դրությամբ իրական արժեքը, երբ մայր կազմակերպությունը սկզբնապես դրանց նկատմամբ իրավունքներ է տվել, ինչպես սահմանված է ՖՀՍՍ 2-ի Ա հավելվածում, ինչպես նաև՝ հաշվի առնելով վաստակման ժամկետից յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում այդ աշխատակցի ծառայած ժամկետի հարաբերական չափը:

10 Խմբի կազմակերպությունների միջև տեղափոխվելուց հետո հնարավոր է, որ նման աշխատակիցը չկարողանա բավարարել շուկայական պայման չհամարվող որևէ այլ վաստակման պայման, ինչպես սահմանված է ՖՀՍՍ 2-ի Ա հավելվածում, օրինակ՝ աշխատակիցը լքում է այդ խումբը նախքան

ծառայության ժամկետի լրանալը: Այս դեպքում յուրաքանչյուր դուստր կազմակերպություն պետք է ճշգրտի այդ աշխատակցից ստացած ծառայությունների գծով նախկինում ճանաչված գումարը՝ ՖՀՄՍ 2-ի 19-րդ պարագրաֆի սկզբունքներին համապատասխան: Հետևաբար, եթե մայր կազմակերպության կողմից իր սեփական կապիտալի գործիքների նկատմամբ տրված իրավունքները չեն վաստակվում այն պատճառով, որ աշխատակիցը չի կարողանում բավարարել շուկայական պայման չհանդիսացող վաստակման որևէ պայման, ապա ոչ մի դուստր կազմակերպություն իր ֆինանսական հաշվետվություններում այդ աշխատակցից ստացած ծառայության գծով կուտակային հիմունքով որևէ գումար չի ճանաչում:

Դուստր կազմակերպությունն իր աշխատակիցներին տալիս է իրավունքներ իր մայր կազմակերպության սեփական կապիտալի գործիքների նկատմամբ (պարագրաֆ 3(բ))

11 Դուստր կազմակերպությունը պետք է իր աշխատակիցների հետ գործարքը հաշվառի որպես դրամական միջոցով մարվող: Սույն պահանջը կիրառվում է՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է դուստր կազմակերպությունը ձեռք բերում սեփական կապիտալի գործիքներ, որպեսզի բավարարի իր պարտականություններն իր աշխատակիցների նկատմամբ:

Ուժի մեջ մտնելը

12 Կազմակերպությունը պետք է սույն Մեկնաբանությունը կիրառի 2007 թվականի մարտի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Եթե կազմակերպությունը սույն Մեկնաբանությունը կիրառում է մինչև 2007 թվականի մարտի 1-ը սկսվող ժամանակաշրջանի համար, ապա այն պետք է բացահայտի այդ փաստը:

Անցումային դրույթներ

13 Կազմակերպությունը պետք է սույն Մեկնաբանությունը կիրառի հետընթաց կերպով ՀՀՄՍ 8-ին համապատասխան՝ ՖՀՄՍ 2-ի անցումային դրույթների համաձայն: